

# ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ՍՏԵԼԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

### ՌՈՒԴՈՒՅ ՎԻՐԵՈՎԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Նորագույն շրջանի բժշկության բարենորոգիչների պայծառ համաստեղության մեջ իր ուրույն տեղն ունի գերմանացի բժիշկ հանճարեղ Ռուզուֆ Վիրխովը (1821-1902): Ախտաբանական անատոմիայի հիմնադիրը և բջջային տեսության հեղինակը, XIX դարի եվրոպացի գիտնականներից շատերի նման, իր առջև ծառայած բժշկագիտական բարդ հարցերը լուծելիս, չէր սահմանափակվում լոկ նեղ մասնագիտության շրջանակով, այլ ձգտում էր նոր լուծումներ գտնել, ելնելով ընդհանուր բժշկագիտական, բնագիտական, սոցիոլոգիական ու մշակութաբանական դիրքերից:

Վիրխովն իր դարաշրջանի իսկական գավակն էր. մի դարաշրջան, որ հղի էր հսկայական սոցիալական և քաղաքական տեղաշարժերով ու հեղափոխական փոթորիկներով: Այստեղից էր ծագում նրա նորարար գաղափարը հիվանդությունների սոցիալական բնույթի և առողջապահության բնագավառի բարեփոխումների անհրաժեշտության մասին: Սրանով էր, անշուշտ, պայմանավորված Վիրխովի հասարակական և քաղաքական դիրքորոշումն ու համակրանքը 1848 թվականի հեղափոխության հանդեպ, իսկ հետագայում նրա՝ որպես ընդդիմադիր առաջադիմական կուսակցության առաջնորդի, դերը գերմանական պառլամենտում, և կրքոտ բանավեճը «երկաթե» կանցլեր Բիսմարկի հետ:

Այս ամենը բարձրագույն ատյանների աչքում Վիրխովին դարձրեց անբարեհույս անձնավորություն և ստիպեց նրան դադարեցնել բժշկագիտական գործունեությունը Բեռլինի համալսարանում և Charite հիվանդանոցում: Ստիպված լինելով տեղափոխվել գավառական Վյուրցբուրգ քաղաքը՝ Վիրխովն անօգուտ շանցկացրեց աքսորի յոթ երկար ու ձիգ տարիները, այլ անմնացորդ

նվիրվեց գիտական հետազոտություններին: Սրանց արդյունքում ստեղծվեցին ոչ միայն «Բջջային ախտաբանություն» (Die Cellularpathologie, 1858) աշխարհահռչակ գիրքը, այլ նաև ընդհանուր բժշկագիտության ու մարդաբանության հարցերին նվիրված մի շարք արժեքավոր գործեր («Gesammelte Abhandlungen zur wissenschaftlichen Medizin», 1856; «Untersuchungen über die Entwicklung des Schädelgrundes», 1857):

Հաղթանակով վերադառնալով Բեռլինի համալսարան՝ Վիրխովը ստանձնում է ոչ միայն ախտաբանական անատոմիայի ամբիոնի ղեկավարի, այլ նաև հատուկ իր համար ստեղծված ախտաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնը: Այստեղ նա ծավալում է հսկայական գիտահետազոտական ու մանկավարժական գործունեություն: Վիրխովն ուսումնասիրում է բազմաթիվ հիվանդությունների պաթոգենետիկ մեխանիզմները, ինչպես նաև ընդհանուր բնագիտական պրոցեսների՝ բորբոքման, ռեգեներացիայի և ուռուցքների պաթոգենեզը: «Ախտաբանության արխիվ» կամ «Վիրխովյան արխիվ» հանդեսում իրար հետևից լույս է տեսնում նրա գրչին պատկանող ախտաբանության և կլինիկական բժշկության հարցերին նվիրված ավելի քան 200 աշխատություն:

Սկսած 1879 թվականից՝ Վիրխովն ակտիվորեն մասնակցում էր Փոքր Ասիայում Հ. Շլիմանի (1822-1890) ձեռնարկած հնագիտական պեղումներին, որոնց նպատակն էր գտնել անտիկ Տրոյա քաղաքը: Կատարելով տրոյական դամբարաններում գտնված գանգերի անթրոպոմետրիկ ուսումնասիրությունը՝ Վիրխովը հետազոտում ամփոփեց իր տվյալները «Հին տրոյական դամբարանները և գանգերը» (Alttröjanische Gräber und Schädel) գրքում: Շարունակելով համագործակցել Շլիմանի հետ՝ նա եղավ Եգիպտոսում, Եթովպիայում ու Հունաստանում:

Վիրխովը մեծ հետաքրքրություն ուներ Կովկասի և մասնավորապես Հայաստանի՝ որպես մարդկային քաղաքակրթության և Արևմուտքն Արևելքի հետ կապող կարևոր կենտրոններից մեկի հանդեպ: Բացառված չէ, որ այդ հետաքրքրությունը հանձարեղ գերմանացի գիտնականի սրտում ծագել էր դեռևս Վյուրցբուրգում ապրած տարիներին: Չէ՞ որ հենց այնտեղ՝ Վյուրցբուրգում, հարյուր տարի իրենից առաջ մեկ այլ հանձար՝ իտալացի որմնանկարիչ Ջովաննի Բատիստա Տիեպոլոն (1696-1770) եպիսկոպոսական պալատի պատերի վրա կերտած իր «Չորս աշխարհամասեր» որմնանկարում պատկերելով Մեսրոպ Մաշտոցին ու հայոց այբուբենը (տե՛ս ներդիր, նկ. 1), սիմվոլիկ ձևով ներկայացրել էր Հայաստանը, որպես քրիստոնեական քաղաքակրթության օրրանն Ասիայում<sup>1</sup>:

Ինչևիցե, սկսած 1881 թվականից, Վիրխովը մի խումբ գերմանացի հնագետների հետ ձեռնամուխ է լինում Կովկասի և Անդրկովկասի դամբարանների պեղումներին, ուսումնասիրելով նրանցում հայտնաբերված գանգերը, ինչպես նաև նյութական մշակույթի առարկաներ՝ հատկապես տարբեր իրական և

<sup>1</sup> Ս. Վարդանյան, «Տիեպոլոն և Հայաստանը», Հանդես տնօրենայ, Վիեննա, 1999, էջ 469-502:

երևակայական կենդանիների (եղջերուի, ձիու, ցուլի, գոմշածիու, շան, բազեի, օձի) պատկերներով զարդարված բրոնզե գոտիները (տե՛ս ներդիր, նկ. 2): Անթրոպոմետրիկ ուսումնասիրությունների հիման վրա նա հանգում է այն եզրակացության, որ Հայկական լեռնաշխարհի տարածքում գտնված հնագույն գանգերը մեծ մասամբ պատկանում են կարճագլուխների դասին, որը հատուկ է հնդեվրոպական ցեղին, մինչդեռ ուշ շրջանի դամբարաններում գերիշխող են դառնում երկարագլուխների գանգերը: Վիրխովը պատվիրում է բժիշկ Հովհաննես Մարգարյանին (Յ. Markaroff) պատրաստել հայկական կարճագլուխ գանգերի հավաքածու, և վերջինս նույն 1881 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ուղարկում է նրան այդ գանգերը դոկտոր Ֆրիդրիխ Բայերնի միջոցով<sup>2</sup>:

Կովկասյան արշավախմբերի կողմից հայտնաբերած նյութերի մեծ մասը գեղարվեստական բարձրարժեք առարկաներ են: Վիրխովն անձամբ մասնակցել էր արշավախմբերից մի քանիսի աշխատանքներին և իր անունը կրող ֆոնդից ֆինանսավորել դրանց ծախսերը: Հնագիտական պեղումները կատարվել էին Հայկական լեռնաշխարհի տարբեր վայրերում, մասնավորապես՝ Ախթալայի, Սևանա լճի ավազանի, Արցախի տարածքում:

Վիրխովը բարձր էր գնահատում Կալաքենդի մոտակայքում գտնվող «դրախտային ամրոցի» (Paradiesfestung) գերմանացի հնագետ Վալդեմար հեռու Խոջալուի դամբարաններում ու Արջածորում հայտնաբերված առարկաները<sup>3</sup>:

Քննարկելով այդ տվյալներն արվեստագիտական տեսանկյունից՝ նա հանգել էր այն եզրակացության, որ «հայկական գեղարվեստն (այսինքն այն երկրի գեղարվեստը, որ Բարձր Հայքին է պատկանում), աւելի հին է, քան Վանայ երկրինը» (այսինքն՝ ուրարտականը)<sup>4</sup>: Այս ամենը, ինչպես գրում է Վիրխովը, համոզել էր նրան, որ Հայկական լեռնաշխարհի տարածքում, մասնավորապես Շուշիի և Կալաքենդի մոտ, դեռևս բրոնզե դարում գոյություն են ունեցել մետաղի մշակման նշանավոր կենտրոններ<sup>5</sup>:

Կովկասում կատարված մարդաբանական ու հնագիտական ուսումնասիրությունների արդյունքները Բեռլինի, Փարիզի ու Վիեննայի հեղինակավոր գիտական շրջաններին ներկայացնելուց հետո Վիրխովն այդ տվյալները մանրամասն նկարագրում ու հրատարակում է “Über die kulturgeschichtliche Stellung des Kaukasus unter besonderer Berücksichtigung der ornamentierten Bronzen-gürtel aus transkaukasischen Gräbern” («Կովկասի տեղը քաղաքակրթութեան պատմութեան մէջ՝ Անդրկովկասեան գերեզմաններում գտնուած բրոնզեայ

<sup>2</sup> Andree Christian, *Rudolf Virchow als Prehistoriker*, Band 2, Briefe Virchows und seiner Zeitgenossen, Köln Wien, 1976.

<sup>3</sup> Ռ. Վիրխով, «Կովկասի տեղը քաղաքակրթութեան պատմութեան մէջ՝ Անդրկովկասեան գերեզմաններում գտնուած բրոնզեայ զարդարում գոտիներն առաւելապէս ի նկատի առնած», *Ազգագրական հանդէս*, Շուշի, 1895, Ա. գիրք, էջ 65, 88, 92, 103, 106:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 110:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 111:

զարդարուն գօտիներն առաւելապէս ի նկատի առած») իր գրքում (տե՛ս ներդիր, նկ. 3): Հայկական հասարակութեան հետաքրքրությունը վերջինիս հանդեպ այնքան մեծ էր, որ աշխատութեան լույս տեսնելուց ընդամենը մեկ ամիս անց այն թարգմանվում է հայերեն ու հրատարակվում նույն 1895 թվականին Շուշուում, «Ազգագրական հանդեսի» էջերում:

Գիրքը թարգմանել էր հայոց պատմության ու մշակույթի լավագույն գիտակ և հայտնի թարգմանիչ Լևոն Բաբայանը (1855/60-1920), որը կրթություն էր ստացել Գերմանիայում<sup>6</sup>: Առաջաբանում նա հայ ընթերցողին ծանոթացրել էր Վիրխովի կենսագրությանն ու գիտական գործերին և տեղադրել մեծ գիտնականի լուսանկարը՝ տպված Վիեննայի Մխիթարյանների տպարանում, հավանաբար, Մխիթարյանների միաբանություն այցելութեան ժամանակ (ևս մի վկայություն հայ մշակույթի հանդեպ Վիրխովի ունեցած հետաքրքրության մասին) (տե՛ս ներդիր, նկ. 4):

Լ. Բաբայանը եղել էր տարբեր եվրոպական երկրներում, ուր ոտք էր դրել հայը, և ականատեսի աչքերով նկարագրել Մոլդովայի ու Վալախիայի սփյուռքահայ օջախները<sup>7</sup>: Ծնված լինելով Շուշու քաղաքում, որի մոտակայքում աշխատում էին Վիրխովի արշավախմբերը, նա բնականաբար չէր կարող տեղյակ չլինել պեղումների մասին, որոնք տակավին շարունակվում էին, երբ նա վերադարձավ հայրենիք: Բացառված չէ, որ Լ. Բաբայանը ծանոթ էր Վիրխովի հետ ու ներկա էր եղել նրա դասախոսություններին Գերմանիայում:

Եվրոպացի գիտնականների անուններից բացի, որոնք համագործակցում էին իր հետ, Վիրխովի գրքում հատուկ հիշատակվում է Անդրեաս Արծրունու անունը (1847-1898) (տե՛ս ներդիր, նկ. 5), որը հայտնի հայ հրապարակագիր ու «Մշակ» ամսագրի հրատարակիչ Գրիգոր Արծրունու կրտսեր եղբայրն էր<sup>8</sup>: Նրանք սերում էին ազնվական հայ տոհմից և իրենց կրթությունը ստացել էին Գերմանիայի Հայդելբերգի համալսարանում:

Անդրեաս Արծրունին մասնագիտացել էր քիմիայի, երկրաբանության ու հանքաբանության գծով: Հանքաբանության հարցերին նվիրված նրա աշխատությունները, հատկապես մի քանի անգամ վերահրատարակված «Բյուրեղների ֆիզիկական քիմիա» մենագրությունը, նրան եվրոպական ճանաչում բերեցին: Նրա անունով կոչվեց արծրունիտ հանքաքարը: 1877 թ. նա ստանում է Բեռլինի համալսարանի պրիվատ-դոցենտի կոչում, իսկ 1880-1883 թթ. դառնում Բեռլինի հանքաբանության թանգարանի տնօրեն: 1884 թվականից մինչև կյանքի վերջը պրոֆեսոր Ա. Արծրունին ղեկավարել է Ախենի պոլիտեխնիկական ինստիտուտի հանքաբանության ամբիոնը, որի շենքի առջև նրա մահվանից հետո կանգնեցվել է գիտնականի կիսանդրին:

<sup>6</sup> Գ. Ստեփանյան, Կենսագրական բառարան, Եր., 1973, հ. Ա, էջ 166:

<sup>7</sup> Լ. Բաբայան, Հայերը Մոլդովայում և Վալախիայում, Քիֆլիս, 1911:

<sup>8</sup> Անդրեաս Արծրունի, Հայկական սովետական հանրագիտարան, Եր., 1976:

Իր ողջ կյանքի ընթացքում Ա. Արծրունին երբեք կապերը չի խզել Հայաստանի ու Կովկասի հետ: Նա Կովկասում մետաղագործության ու քիմիայի զարգացման ծրագիր էր մշակել: Հայ գիտնականը մասնակցել է մի շարք գիտական արշավախմբերի աշխատանքներին ոչ միայն Կովկասում, այլև Ուրալում (Ռուսաստան), Եգիպտոսում և Բրազիլիայում: Նա ընտրվել է Տուրինյան, Բավարյան ու Սանկտ-Պետերբուրգյան ակադեմիաների անդամ: Լինելով հսկայական տեսական ու փորձնական գիտելիքների և էրուդիցիայի տեր՝ Ա. Արծրունին հարգանք էր ներշնչում Վիրխովին, որի հետ կապված էր երկարամյա համագործակցությամբ: Պահպանվել է Վիրխովի նամակագրությունը Ա. Արծրունու և հայտնի հայ բժիշկ ու հասարակական գործիչ Ավետիք Բաբայանի (1844-1913) հետ<sup>9</sup>: Վերջինս, լինելով Կովկասյան բժշկական ընկերության հիմնադիրներից մեկը, 1881 թ. Թիֆլիսում այդ կազմակերպության անունից շերմորեն ողջունել ու մեծարել է գերմանացի հանճարին: Իսկ 1891 թ., երբ ողջ քաղաքակիրթ աշխարհը տոնում էր Վիրխովի յոթանասունամյա հոբելյանը, Ավետիք Բաբայանը մի խումբ հայ բժիշկների՝ Ստեփան Անանյանի, Սամսոն Մայսուրյանցի և Հովհաննես Մարգարյանի հետ որոշեց Աբասթումանի մոտակայքում գտնվող ժայռին մարմարե հուշատախտակի վրա հավերժացնել Վիրխովի անունը, որը տարիներ առաջ այցելել էր այդ առողջարանը և մեծ ապագա խոստացել նրան:

Եվ վերջապես՝ մի քանի խոսք այն մարդու մասին, որի անունը և որին նվիրված ձոնը դրոշմված է «Կովկասի տեղը քաղաքակրթութեան պատմութեան մէջ» Վիրխովի գրքի հայերեն թարգմանության տիտղոսաթերթի վրա: Դա հայ բժիշկ, սոցիոլոգ, բանաստեղծ ու նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ Լևոն Աթաբեկյանն է<sup>10</sup> (1875-1918) (տե՛ս ներդիր, նկ. 6): Նա ծնվել էր Արցախի Կուսապատ գյուղում, 1893 թ. ավարտել Շուշիի ռեալական ուսումնարանը և շարունակել ուսումը Եվրոպայում: Ուսումնասիրել է սոցիալական գիտություններ Տյուբինգենի և Լայպցիգի համալսարաններում, իսկ Բեռլինում և Յյուրիխում՝ բժշկություն:

Վերադառնալով հայրենիք՝ Լ. Աթաբեկյանը մեծ եռանդով սկսում է զբաղվել բժշկության ու առողջապահության հրատապ հարցերով Անդրկովկասում, և մասնավորապես Շուշիում, Գանձակում, Երևանում, Թիֆլիսում ու Բաքվում: Նրա ջանքերով Բաքվում բացվում է առաջին հիվանդանոցը թոքախտավորների համար: Վիրխովի նման Լ. Աթաբեկյանն օժտված էր լայն գիտական տեսադաշտով ու հասարակական գործչի ու բարեշրջողի բուն խառնվածքով: Նա առաջիններից մեկն էր, որ սոցիոլոգիական հետազոտություններ ծավալեց Արցախում: 1897 թ. «Ազգագրական հանդեսի» էջերում լույս տեսավ «Ստա-

<sup>9</sup> Ս. Վարդանյան, Հայաստանի բժշկության պատմություն, Եր., 2000, էջ 276-279:

<sup>10</sup> Լ. Աթաբեկյան, Հայկական սովետական հանրագիտարան, Եր., 1974:

տիստիկական տեղեկություն Շուշու ամբողջ գաւառի մասին» նրա արժեքավոր աշխատությունը<sup>11</sup>:

Աւոն Աթաբեկյանը նաև բանաստեղծ ու տրիբուն էր, որոնք բոլոր ժամանակներում եղել են ապագա հեղափոխությունների մրրկահավերն ու առաջին զոհերը: «Դաշնակցություն» կուսակցության անդամ, նա 1918 թ. մարտի 20-ին սպանվեց Բաքվում ազգամիջյան բախումների ժամանակ, երբ փորձում էր հաշտեցնել դիմակայող կողմերին:

Մենք համարյա ոչինչ չգիտենք Վիրխովի հետ Լ. Աթաբեկյանի անձնական կապերի մասին: Բացառված չէ, որ նրանց ծանոթությունը կայացած լիներ դեռևս Բեռլինի համալսարանում Լ. Աթաբեկյանի ուսանողական տարիներին: Պատահական չէ նաև, որ հենց նրան է ձոնել իր թարգմանությունը Լ. Բաբայանը և ոչ թե գրքի հեղինակը (գերմաներեն բնագրում այդ ձոնը բացակայում է). ի դեմս Աւոն Աթաբեկյանի, Բաբայանը տեսնում էր ապագա հայ Վիրխովին:

### **С. Варданян Virchow и Армения**

В статье приведены материалы, посвященные малоизученным страницам биографии великого немецкого врача Рудольфа Вирхова (1821-1902), основоположника патологической анатомии и создателя теории клеточной патологии в современной медицине. Исследование последнего периода жизни Вирхова, связанного с Кавказскими экспедициями и археологическими раскопками на территории Армянского нагорья, проливают новый свет на его глубокое понимание роли Армении в истории мировой культуры и выявляют его связи с крупными армянскими учеными и врачами XIX-XX вв.

### **S. Vardanyan Virchow and Armenia**

The article embraces materials elucidating some unknown pages in the biography of great German physician Rudolf Virchow (1821-1902), the founder of pathological anatomy and creator of cellular theory in modern medicine. The study deals with the last period of Virchow's life and his work associated with the Caucasian expedition and excavations on the territory of the Armenian Highland, which shed a new light on Virchow's profound understanding of Armenia's role in the history of world culture and reveal his connections with some eminent representatives of Armenian science and medicine in XIX-XX centuries.

<sup>11</sup> Լ. Աթաբեկյան, «Ստատիստիկական տեղեկութիւն Շուշու ամբողջ գաւառի մասին», Ազգագրական հանդէս, Շուշի, Բ գիրք, 1897, էջ 54-76: